տէին զՀանապարհն նոցա. և ինքն անկեալ էր ի արբեցութիւն, ի յուտել և ի ըմպել, և իւրովք ամենայն իշխանօք, փողովք և տաւուլովք յաղագս ուրախութեան, զոր լուաւ զՀամբաւ գալոյ։ Եւ յորժամ եկին հասին այդ անօրէնին պահապանացն, ի այնժամ կոտորեցին զնոսա. և յաւել եւս այլ զօրք, զորս կացուցեալ էր ի վերայ ճանապարհի նոցա. և զնոսա կոտորեցին։ Յետ այնորիկ գնացին փախստական և գուժ հասուցին այդ անօրէնին, եթէ ահաւասիկ է, մերձեցաւ զօրքն նոցա։ Իսկ նա իբրեւ լուաւ զբանս գուժականն՝ ուրախացաւ. ետ կատաղի հպարտութեամբն (պատասխանի), և ասաց նախարարաց իւրոց, զի պատրաստութիւն ունիցեն, և զրեհեսցեն և զինուորեսցեն, և երթիցեն ընդդէմ նոցա։ Եւ ինքն պիղծ նոյնպէս պատրաստելով

Պոչան [1] քաղքին եկեղեցին
Ոսկով պատկերք գրած մէջին,
Շատ մալ խարճած վրայ նորին
Յիշատակ էր Քրիստոսատուրին.
Վշվոտայն աղաչեցին,
Հազար կարմիր տանք քեզ ասցին,
Ըսկիք, խաչեր և զանօթնին,
Մի աւերեր զեկեղեցին։
Պեղծ վշվոտան նոցա ասաց,
Զխնդիրք նոցա ոչ կատարեաց.
Անպատճառ քակել ասաց,
Թէ չէ՝ դլխոցդ էք դուք զրկած։
Քաղաք մի կայր Ուռումանի,
Ինքըն փոքրիկ բարով իլի,
Շատ Հայ ազգ կայր ի յայն տեղի,
Խիստ տօրվայթորք և անուանի։
Երեց մի կայր իւրեանց մէջի,
Էր շատ գանձով բարով իլի,
Հեզ և հանդարտ ամենայնի,
Հիւրամեծար էր աղքատի.
Տարին տաեան զինքն կացուցին,
Ասցին, թէ մուտ հաւատ Հոռմի,
Թէ չէ՝ տանջենք անհրնարին,
Բանտ և ի մահ աղջամղջին։
Տէր խաչատուր քաջ և արին՝
Պատասխանեաց ի դէմ նոցին.
Զեմ ուրանալ զհաւատս հին,
Զդաւանութիւն Լուսաւորչին։

Ի Մինթանայ երկրէն եկայ,
Հաւատս համար պանդխտեցայ,
Ըզեմ հաւատն ոչ ուրացայ,
Ի յայս երկիրս ընակեցայ։
Եւ այլ բազում բաներ ասաց,
Թէ, ձեր հաւատն ու դուք կորած,
Ամէն ազգէ աչից ելած,
Օլախացըն [2] հաւատածն նեխած։
Պատասխանեց պեղծ վշվոտան,
Տօ՝, Հայ երեց ամբարտաւան,
Արի՛ եղիր [3] քաղկեդոնական
Որ չըտանջեմ զքեզ ի յատեան [4]։
Դարձեալ հրաման ետ Մինկանին,
Զտէր խաչատուրն տանջեցին.
Զեռվին և զոտսըն կապեցին,
Երկու աչքունքըն [5] փորեցին։
Կրկին ասաց, թէ ուրացիր
Զլուսաւորչին հաւատն ընտիր.
Թէ չէ՝ գլուխըդ կորուսիր,
Դուստր և որդիքըդ խեղճ արիր։
Ամենայնուն ասաց, գնացէք
Զդուստր և զորդիքըն ջարդեցէք,
Զտուն եւ զտեղին թալանեցէք.
Ցեռոյ զերեցըն կնքեցէք։
Երբոր եկան պիղծ առաջնին,
Կին և որդայքըն ճիչ բարձին.
Լալով յոտըս [6] անկան ծնողին
Աղաչելով կողկողագին.

1. Պոտշան, Պոթուշան։
2. Օլախաց ազգ։
3. Դարձիր օրէնք։
4. Ի յաւիտեան։
5. Եւ զերկու աչքըն։
6. Ցուս։